Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 30-06-2021 թ. որոշմամբ
«ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2020 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը	«ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ	
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ Տերյան 74	
1.3 Պետական գրանցման համարը	222.160.00460	
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2005-02-24	
1.5 ՀՎՀՀ-ն	02577018	
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)94255525	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	https://icare.am/	
1.8 Էլեկտրոնային փոստը	info@icare.am	
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
Արմեն Ասատրյան		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Արթուր Գրիգորյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	21	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերակցության Հայաստանյան գրասենյակ-ԳԻԴՄԱՍՏԵՐ Գինու զբոսավարների վերապատրաստման ծրագիր	3816760

Digitally signed by
BALANYAN HAYK
3509710107
Date: 2021.09.02
18:21:53
GMT+04:00

	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերակցության Հայաստանյան գրասենյակ, Բարձրորակ հեղուկ քրոմատոգրաֆի միջոցով նոր լաբորատոր և խորհրդատվական ծառայությունների մշակում	2407200
	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերակցության Հայաստանյան գրասենյակ- Հայաստանում խոտածածկ տարածքների չափի, վիճակի և կենսազանգվածի քարտեզագրում նախագիծ	36638571
	Ավստրիայի հանր-ն դեսպ-ն տեխն-ն համագործ. Գրասենյակ- Ագրոտեխնոլոգիական ստարտափների մրցույթի կազմակերպում	6571125
	Միջազգ.ֆինանս.կորպոր.Հայաստ. ներկայաց.-IFC_Հայաստանի տնտեսական աճ հետազոտություն	18714000
	ՄԱԿ-ի զարգացման ծրագրի գրասենյակ Հայաստանում(UNDP)- ՄԱԿ-ի ԶԳ Կլիմայի փոփոխության ռիսկերի, խոցելիության, ազդեցությունների և հարմարվողականության վերաբերյալ աշխատաժողովներ	11935700
	ՀՀ Համ.բանկի արտ.և լիազ.ներկա ՓԲԸ-Հայաստանում հողերի սեփականության և հողատարածքների ուսումնասիրության իրականացում ծրագիր	23142772
	Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող Գործողության Անդրսահմանային դաշինք հանուն Սևծովյան ավազանում կլիմային ուղղված խելացի և կանաչ գյուղատնտեսության BSB-1135 ծրագիր	20308101
	Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող գործողության Սևծովյան տարածաշրջանի, որպես գինու զբոսաշրջության ուղղության խթանում «Գինու ծով» BSB-1034 ծրագիր	117271960
	SDO USAID ARMENIA- Նորարարական գյուղատնտեսության վերապատրաստման և ուսուցման ճամբար (ԱԳՐԻ ՔԵՄՓ) ծրագիր	21393783
	Հայաստանի Պետական Ագրարային Համալսարան- Նորարարական գյուղատնտեսության վերապատրաստման և ուսուցման ճամբար (ԱԳՐԻ ՔԵՄՓ) ծրագիր	12177670

	ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն, Գյուղատնտեսական կարիերայի վերաբերյալ իրազեկման արշավ Հայաստանի ընտրված մարզերի դպրոցականների համար և Դպրոցական սննդի և սնուցման ծրագրի ազդեցության գնահատում գյուղատնտեսության ոլորտի առնչությամբ փորձնական նախագծի իրականացում	13429703
	ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունից ԱԳՐՈ-հետազոտությունների իրականացում Հայաստանում	37248360
	Լաբորատոր փորձաքննությունների դիմաց ստացված վճարներ	7697800
	Վարձակալություն, ապահովագրական հատուցում, այլ	582620
	Նվիրատվություններ	20158060
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Գինեգործական ու ջերմատնային դասընթացների դիմաց ստացված վճարներ	14560600
	Նվիրատվություններ	507925
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	Սարքավորումներ	3413938
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոն	79931236	
Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերակցության Հայաստանյան գրասենյակ, ԳԻԴՄԱՍՏԵՐ Գինու զբոսավարների վերապատրաստման ծրագիր	386000	
Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերակցության Հայաստանյան գրասենյակ, Բարձրորակ հեղուկ քրոմատոգրաֆի միջոցով նոր լաբորատոր և խորհրդատվական ծառայությունների մշակում	3453490	

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերակցության Հայաստանյան գրասենյակից, Հայաստանում խոտածածկ տարածքների չափի, վիճակի և կենսազանգվածի քարտեզագրում նախագիծ	26843140
Ավստրիայի հանր-ն դեսպ-ն տեխն-ն համագործ. Գրասենյակ-Ագրոտեխնոլոգիական ստարտափների մրցույթի կազմակերպում	6629875
Միջազգ.ֆինանս.կորպոր.Հայաստ. ներկայաց.-IFC_Հայաստանի տնտեսական աճ հետազոտություն	18714000
ՄԱԿ-ի զարգացման ծրագրի գրասենյակ Հայաստանում(UNDP)-ՄԱԿ-ի ԶԳ Կլիմայի փոփոխության ռիսկերի, խոցելիության, ազդեցությունների և հարմարվողականության վերաբերյալ աշխատաժողովներ	11173436
ՄԱԿ-ի զարգացման ծրագրի գրասենյակ Հայաստանում(UNDP)-ՄԱԿ-ի ԶԳ "Կայուն Զարգացման Նպատակների Ֆինանսավորման հարթակ" և Նորամուծական լուծումներ Հայաստանում ԿԶՆ-երի ներդրման ծրագիր	16375223
ՀՀ Համ.բանկի արտ.և լիազ.ներկա ՓԲԸ-Հայաստանում հողերի սեփականության և հողատարածքների ուսումնասիրության իրականացում ծրագիր	22152550
Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող Գործողության Անդրսահմանային դաշինք հանուն Սևծովյան ավազանում կլիմային ուղղված խելացի և կանաչ գյուղատնտեսության BSB-1135 ծրագիր	4768648
Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող գործողության Սևծովյան տարածաշրջանի, որպես գինու զբոսաշրջության ուղղության խթանում «Գինու ծով» BSB-1034 ծրագիր	11005544
Եվրոքուալիթի Կազմակերպությունից՝ ԱՊՀ երկրների միջև գյուղատնտեսական առևտրի պոտենցիալի հետազոտություն	2378000
Ավստրիական զարգացման գործակալություն-Հայաստանում այգեպտղաբուծության ոլորտի զարգացման ծրագիր(“FRUITENIA”)	77998232
SDO USAID ARMENIA-Նորարարական գյուղատնտեսության վերապատրաստման և ուսուցման ճամբար (ԱԳՐԻ ՔԵՄՓ) ծրագիր	18258242

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունից, ԱԳՐՈ-հետազոտությունների իրականացում Հայաստանում	34549795
Գիտելիքային կարողությունների զարգացում էկոտուրիզմի գծով	823000
Գինեգործական ու ջերմատնային դասընթացներ	9609819
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	351220453
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	345050230

Նշումներ՝

Եզրակացությունը և ֆինասնական հաշվետվությունները մեկ PDF ֆայլով են

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 35 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

«ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ

«ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի
Հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի (ՀԷՄՍԽ) կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի կանոնագրքի»* (Մասնագիտական էթիկայի կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող մասնակգիտական էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանքներ

Ցանկանում ենք ուշադրություն հրավիրել այն փաստին, որ Հիմնադրամի 31 դեկտեմբերի 2019թ. դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որը 2020թ. հունիսի 15-ին թվագրված անկախ աուդիտորի եզրակացությունում արտահայտել է չձևափոխված կարծիք:

Որպես 2020թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտի մաս՝ մենք իրականացրել ենք ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 22-ում ներկայացված վերադասակարգումների աուդիտը, որոնք կիրառվել են նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունների տվյալները վերահաշվարկելու համար: Մեր կարծիքով, նշված վերադասակարգումները տեղին են և կիրառվել են ըստ պատշաճի:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Չեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

«Թրասթ Աուդիտ» ՓԲԸ
տնօրեն Հայկ Մարգարյան

Աուդիտի ղեկավար
Լիլիթ Կատոյան

30 հունիսի 2021թ
ք. Երևան

«Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար դրամ	Ծնթ.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	161,297	159,839
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	5	2,346	3,187
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**163,643**	**163,026**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	6	8,522	2,694
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	98,641	33,729
Դրամական միջոցներ	8	290,235	327,687
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**397,398**	**364,110**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**561,041**	**527,136**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ			
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		246,283	241,052
Ընդամենը զուտ ակտիվներ		**246,283**	**241,052**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	9	38,449	44,226
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**38,449**	**44,226**
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային կրեդիտորական և այլ պարտավորություններ	10	16,982	15,710
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		1,991	406
Եկամուտներին վերաբերող շնորհներ	9	257,336	225,742
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**276,309**	**241,858**
ԸՆԴԱՄԵՆԸ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**561,041**	**527,136**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. հունիսի 30-ին:

Արթուր Գրիգորյան
Տնօրեն

Հայկ Բալանյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

Հազար դրամ	Ծնթ.	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	11	56,465	25,325
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	9	9,192	9,442
Եկամուտներին վերաբերող շնորհներից եկամուտ	9	233,902	264,454
Նվիրաբերությունից եկամուտ	12	20,666	183,801
Այլ եկամուտներ		-	417
Աշխատակիցների հատուցումների գծով ծախսեր		(153,519)	(181,232)
Այլ աշխատանքի վարձատրություն		(85,918)	(58,046)
Հիմնական միջոցների և այլ ոչ ընթացիկ ակտիվների գծով մաշվածություն		(29,871)	(17,724)
Գրասենյակային ծախսեր	13	(18,918)	(20,186)
Ուսանողների կեցության վճարներ և այլ օժանդակություն		(1,510)	(27,905)
ՀԱԱՀ ուսումնաարտադրական ջերմատան վերակառուցման աշխատանքների ֆինանսավորում		(3,074)	(31,993)
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր		(4,203)	(25,396)
Վառելիք		(1,303)	(1,850)
Գործառնական և այլ ծախսեր	14	(47,379)	(8,436)
Գործառնական շահույթ / (վնաս)		**(25,470)**	**110,671**
Փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ		36,226	697
Շահույթ մինչև հարկումը		**10,756**	**111,368**
Շահութահարկի գծով ծախս	15	(5,525)	(1,328)
Տարվա շահույթ		**5,231**	**110,040**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**5,231**	**110,040**

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

«Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամ
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար դրամ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**131,012**	**131,012**
Տարվա շահույթ	110,040	110,040
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	110,040	110,040
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**241,052**	**241,052**
Տարվա շահույթ	5,231	5,231
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	5,231	5,231
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**246,283**	**246,283**

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

«Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկայացված)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ծառայությունների մատուցումից մուտքեր	66,153	29,615
Ստացված շնորհներ	281,638	456,023
Ստացված նվիրաբերություններ	20,666	183,801
Ծրագրային ֆինանսավորում	(79,687)	-
Տրված նվիրատվություն	(8,000)	-
Վճարումներ մատակարարներին	(66,136)	(95,635)
Վճարումներ անձնակազմին և նրանց անունից՝ կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների դիմաց	(243,154)	(239,950)
Ուսանողների օժանդակություն	(2,260)	(1,168)
Վճարված հարկեր և այլ պարտադիր վճարներ՝բացի շահութահարկից	(6,267)	(3,701)
Վճարված շահութահարկ	(3,940)	(1,000)
Այլ գործառնական ելքեր	(1,657)	(1,020)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(42,644)**	**326,965**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և այլ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար վճարումներ	(32,360)	(124,484)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(32,360)**	**(124,484)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
-	-	-
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	-	-
Դրամական միջոցների զուտ հոսք	**(75,004)**	**202,481**
Ժամանակաշրջանի սկզբի դրությամբ դրամական միջոցներ	327,687	125,094
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	37,552	112
Ժամանակաշրջանի վերջի դրությամբ դրամական միջոցներ	**290,235**	**327,687**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» Հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադրվել է հիմնադիր՝ Տեխասի գյուղատնտեսական փորձարկումների կայանի որոշման համաձայն և գործում է՝ համաձայն ՀՀ Սահմանադրության, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի: Հիմնադրամը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից (գրանցման համար `222.160.00460, վկայականի համար 03Ա066337, ՀՎՀՀ՝ 02577018) 2005թ. փետրվարի 24-ին:
Հիմնադրամի գործունեության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Տերյան 74:
Հիմնադրամը շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը հետապնդում է բարեգործական, սոցիալական, գիտական, կրթական, բնապահպանական նպատակներ և իր գործունեությունը սկսել է 2005թ. հունիսից:
Հիմնադրամն իր նպատակներին համապատասխան կարող է իրականացնել՝

- Գյուղատնտեսական, սոցիալական, գիտական, կրթական և այլ ոլորտներում բարեգործական, աջակցության, զարգացման և ուսուցման ծրագրեր
- Հետևյալ ձեռնարկատիրական գործունեության տեսակները.
    - ✓ Հետազոտություններ ու մշակումներ բնական, հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառներում
    - ✓ Շուկայի կոնյուկտուրայի և հասարակական կարծիքի բացահայտման հետազոտություններ
    - ✓ Խորհրդատվություն գործունեության կառավարման հարցերով
    - ✓ Դասընթացների կազմակերպում

2020 թվականին Հիմնադրամի իրականացրած հիմնական ծրագրերը՝ Միավորված Ազգերի Կազմակերպության զարգացման (UNDP), Միավորված Ազգերի Պարենի և Գյուղատնտեսության Կազմակերպության (FAO), Համաշխարհային Բանկի (World Bank), Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության Հայաստանյան գրասենյակի (GIZ), ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) աջակցությամբ ու ֆինանսավորմամբ իրականացված ծրագրերն են :

Հիմնադրամի կառավարման մարմիններն են.

- Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը (Խորհուրդ)
- Հիմնադրամի տնօրենը

Խորհուրդը բաղկացած է 3 անդամից, որի կազմը հետևյալն է.

- Ջոն Նիքըլս - Հոգաբարձուների խորհրդի նախագահ
- Արմեն Ասատրյան - Հոգաբարձուների խորհրդի անդամ
- Ալեքսան Շանոյան - Հոգաբարձուների խորհրդի անդամ

2018թ. սեպտեմբերից Հիմնադրամի տնօրենն է Արթուր Գրիգորյանը, իսկ մինչ այդ՝ Վարդան Ուռուտյանը:

2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի աշխատակիցների ցուցակային թվաքանակը կազմել է 23 աշխատակից (2019թ.՝ 17 աշխատակից):

31 դեկտեմբերի 2020 թվականի դրությամբ Հիմնադրամին է պատկանում «Վիկոմ Վայն Լաբ» ՍՊ ընկերության (գրանցված՝ 14.02.2019թ. Հայաստանի Հանրապետությունում) 60% բաժնեմասը, սակայն Հիմնադրամի կողմից վերոնշյալ ընկերության կանոնադրական կապիտալը սույն ֆինասնական

հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ չի համալրվել, իսկ ընկերությունը հիմնադրման օրվանից փաստացի որևէ գործունեություն չի իրականացրել: Հիմնադրամը նախատեսում է լուծարել ընկերությունը «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

2. Պատրաստման հիմունքներ

2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն, որոնք հրապարակվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

Ներկայումս ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»:

2.2 Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար Հիմնադրամի կողմից ընդունված չափման հիմունք է հանդիսանում սկզբնական արժեքը, որը սովորաբար համակցվում է այլ չափման հիմունքների հետ: Այլ չափման հիմունքներ կիրառելիս Հիմնադրամը ներկայացնում է բացահայտումներ համապատասխան ծանոթագրություններում:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Անընդհատություն

Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են, ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում, և որ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում գործունեությունը դադարեցնելու կամ էական կրճատելու մտադրություն կամ անհրաժեշտություն չկա:

2.5 Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

2.6 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2020թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

ՖՀՄՍ 3 «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ». Ձեռնարկատիրական գործունեության սահմանումը

ՖՀՄՍ 3-ում կատարվել է ձեռնարկատիրական գործունեության սահմանման խմբագրում, համաձայն որի նախ պարզաբանվել է, որ ձեռնարկատիրական գործունեությունը պետք է անպայման ունենա մուտքեր (մուտքային գործոններ), գործընթաց, որը պետք է լինի նշանակալի, և մուտքերն ու գործընթացը միասին պետք է ապահովեն արդյունք: Նաև պարզաբանվել է, որ ձեռնարկատիրական գործունեության արդյունքը արտահայտվում է հաճախորդներին ծառայություն կամ ապրանք մատակարարելով, կամ սովորական գործունեությունից այլ եկամուտների տեսքով:

ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը» և ՀՀՄՍ 8 «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ». Էականության սահմանումը

ՀՀՄՍ 1-ում և ՀՀՄՍ 8-ում տեղի է ունեցել էականության սահմանման խմբագրում, ըստ որի տեղեկատվությունը համարվում է էական, եթե կա ողջամիտ ակնկալիք, որ դրա բացթողումը, ոչ ճիշտ ներկայացումը կամ միավորման արդյունքում աննկատ ներկայացումը կազդի հաշվետվությունների հիմնական օգտագործողների կողմից կայացվող որոշումների վրա:

Ֆինանսական հաշվետվությունների վերանայված Հայեցակարգային Հիմունքներ

Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը թողարկել է վերանայված Հայեցակարգային Հիմունքները, որն օգտագործվելու է ստանդարտներ սահմանելիս որոշումների կայացման գործում: Հիմնական փոփոխությունները հետևյալի վերաբերյալ են.

- ֆինանսական հաշվետվությունների նպատակի սահմանում
- օգտակար ֆինանսական տեղեկատվության որակական բնութագրեր
- հաշվետու կազմակերպության սահմանում
- ակտիվի, պարտավորության, սեփական կապիտալի, եկամտի և ծախսերի սահմանումներ
- ֆինանսական հաշվետվություններում ակտիվների և պարտավորությունների ճանաչման չափանիշների և դրանց ապաճանաչման ուղեցույցի ավելացում
- ուղեցույցի ավելացում տարբեր չափման հիմունքների համար, և
- սահմանում, որ շահույթը կամ վնասը կատարողականի հիմնական ցուցանիշն է, և որ, սկզբունքորեն, այլ համապարփակ արդյունքի եկամուտներն ու ծախսերը պետք է վերադասակարգվեն, երբ դա նպաստում է ֆինանսական հաշվետվությունների տեղին կամ արժանահավատ ներկայացմանը:

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ առկա ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից

Պարտավորությունների դասակարգում ընթացիկի և ոչ ընթացիկի – Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում

ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը» ստանդարտի փոփոխությունները հստակեցնում են, որ պարտավորությունները դասակարգվում են ընթացիկի և ոչ ընթացիկի՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գոյություն ունեցող իրավունքներով պայմանավորված: Դասակարգման վրա չեն ազդում կազմակերպության ակնկալիքները կամ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքերը (օրինակ՝ պայմանների խախտումը):

Փոփոխությունները նաև հստակեցնում են ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը» ստանդարտի «պարտավորության մարում» արտահայտության նշանակությունը: Փոխությունները կարող են ազդել պարտավորությունների դասակարգման վրա՝ հատկապես այն կազմակերպությունների համար, որոնք նախկինում դասակարգումը որոշելու համար հաշվի են առել ղեկավարության մտադրությունները և որոշ պարտավորությունների վրա, որոնք կարող են փոխարկվել կապիտալի: Վերոնշյալների վրա փոփոխությունների ազդեցությունը պետք է կիրառվի հետընթաց՝ համաձայն ՀՀՄՍ 8 «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ» ստանդարտի պահանջների:

Հիմնական միջոցներ՝ մուտքեր նախքան նախանշած նպատակով օգտագործումը - Փոփոխություններ ՀՀՄՍ 16-ում

ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտի փոփոխություններով արգելվում է կազմակերպություններին հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքից կատարել նվազեցումներ՝ հիմնական միջոցի միավորի վաճառքից առաջացող ցանկացած մուտքերից՝ ակտիվը նախանշած նպատակով օգտագործելու համար պատրաստելու ժամանակահատվածի ընթացքում: Փոփոխությունները նաև հստակեցնում են, որ կազմակերպությունը պետք է թեստավորի՝ արդյոք ակտիվը գտնվում է պատշաճ վիճակում, երբ գնահատում է տվյալ ակտիվի տեխնիկական և ֆիզիկական վիճակը: Ակտիվի ֆինանսական ցուցանիշները տեղին չեն նման գնահատման համար: Կազմակերպությունները պետք է առանձին բացահայտեն այն ակտիվներից մուտքերի գումարները և ինքնարժեքները, որոնք չեն ստացվել կազմակերպության սովորական գործունեության արդյունքում:

Հղումներ Հայեցակարգային Հիմունքներին - Փոփոխություններ ՖՀՄՍ 3-ում

Որոշ փոփոխություններ են կատարվել ՖՀՄՍ 3 «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ» ստանդարտում՝ թարմացնելով հղումները ֆինանսական հաշվետվությունների Հայեցակարգային Հիմունքներին և ավելացվել է բացառություն ՀՀՄՍ 37 «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» և ՖՀՄՍՄԿ 21 «Պարտադիր վճարներ» մեկնաբանության շրջանակներում պարտավորությունների և պայմանական պարտավորությունների ճանաչման համար: Փոփոխությունները նաև հաստատում են, որ պայմանական ակտիվները չպետք է ճանաչվեն ձեռքբերման ամսաթվի դրությամբ:

Տարեկան բարեփոխումներ՝ 2015-2017թթ.

2015-2017թթ. տարեկան բարեփոխումները մի շարք ՖՀՄՍ-ներում կատարել են որոշ աննշան փոփոխություններ, որտեղ Հիմնադրամին վերաբերող փոփոխություններ չկան:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն

3.1 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը ճանաչվում է որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Հիմնադրամ, և միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Հիմնական միջոցի միավորը որպես ակտիվ ճանաչելուց հետո հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է գնման գինը, ներառյալ՝ ներկրման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը, հանած առևտրային զեղչերը և արտոնությունները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսումները: Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքում ծախսումների ճանաչումը դադարեցվում է, երբ միավորը գտնվում է այն վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է, որպեսզի այն հնարավոր լինի օգտագործել ղեկավարության նախանշած նպատակներով:

Սկզբնական արժեքը ներառում է մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները: Այս ակտիվների մաշվածությունը ևս հաշվարկվում է, երբ դրանք դառնում են պատրաստ՝ իրենց նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցի միավորի օտարումից կամ դուրսգրումից առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի (եթե առկա են) և հաշվեկշռային արժեքի տարբերություն: Հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ներառվում է շահույթում կամ վնասում, երբ միավորն ապաճանաչվում է:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, ճանաչվում է հաշվեկշռային արժեքում, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարվում են ճանաչման չափանիշները: Այդ փոխարինված մասերի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Պահպանման և ընթացիկ սպասարկման, վերանորոգման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարվելու ժամանակաշրջանում:

Ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով հաշվարկի գծային մեթոդը հիմնական միջոցի գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն, երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվի՝ ՖՀՄՍ 5-ի համաձայն որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու կամ որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբում ներառվելու և ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանց մաշվածությունը հաշվարկվում է առանձին:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

- Շենք-շինություններ — 20 տարի
- Տրանսպորտային միջոցներ — 5-7 տարի
- Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ — 1-8 տարի
- Մեքենաներ և սարքավորումներ — 1-7 տարի
- Կտավներ — 20 տարի
- Այլ հիմնական միջոցներ — 5-10 տարի

3.2 Վարձակալություն

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Հիմնադրամը, որպես վարձակալ, ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն, բացառությամբ ստորև նշված դեպքերի.

ա) բոլոր կարճաժամկետ (12 ամիսը չգերազանցող ժամկետով) վարձակալությունների (ներառյալ այն վարձակալությունները, որոնց մնացորդային ժամկետը 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ չի գերազանցում 12 ամիսը) և

բ) բոլոր այն վարձակալությունների, որոնց դեպքում վարձակալության առարկա ակտիվը փոքրարժեք է (այսինքն՝ դրա արժեքը նոր վիճակում չի գերազանցում 3 միլիոն դրամը)։

Վերը նշված վարձակալությունների գծով վարձակալական վճարները ճանաչվում են ծախս գծային հիմունքով՝ վարձակալության ժամկետի ընթացքում, ինչպես որ նախորդող ժամանակաշրջաններում ճանաչվում էին գործառնական վարձակալությունները։

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվի սկզբնական արժեքի մեջ ներառվում են՝

ա) վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափման գումարը, ինչպես նկարագրված է ստորև,

բ) վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ,

գ) վարձակալի կողմից կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները։

Մեկնարկի ամսաթվին վարձակալության գծով պարտավորությունը չափվում է այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ զեղչված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքի կիրառմամբ, եթե այդ դրույքը հեշտությամբ որոշելի է։ Հակառակ դեպքում՝ կիրառվում է վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը։ Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները բաղկացած են վարձակալության ժամկետի ընթացքում հիմքում ընկած ակտիվի օգտագործման իրավունքի գծով հետևյալ վճարումներից, որոնք մեկնարկի ամսաթվին դեռևս վճարված չեն.

ա) հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ)՝ հանած վարձակալության ցանկացած ստացվելիք խրախուսում,

բ) վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից,

գ) գումարները, որոնք ակնկալվում է վճարել վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո,

դ) գնման ընտրանքի իրագործման գին, եթե վարձակալը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ ընտրանքը, և

ե) վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումներ, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է վարձակալի՝ վարձակալությունը դադարեցնելու ընտրանքի իրագործումը։

Ճանաչման և չափման նպատակով, մինչև 2019 թվականի հունվարի 1-ը կնքված վարձակալությունները դիտվում են որպես այդ ամսաթվին կնքված և մեկնարկող վարձակալություն՝ մնացորդային ժամկետով։

Սկզբնական ճանաչումից հետո օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով՝

ա) հանած՝ կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները, և

բ) ճշգրտված՝ վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափմամբ (մասնա¬վո-րապես՝ վարձակալության ժամկետի կամ փոփոխուն վարձավճարների վերանայման դեպքում)։

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է սեփական հիմնական միջոցների հաշվառմանը համանման կերպով։ Ընդ որում, եթե ակնկալվում է, որ վարձակալության հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին կամ ընթացքում կփոխանցվի Հիմնադրամին, ապա օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ավարտը։ Հակառակ դեպքում՝ մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից և վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը։

Մեկնարկի ամսաթվից հետո, վարձակալության գծով պարտավորությունը չափվում է՝

ա) ավելացնելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վարձակալության գծով պարտավորության նկատմամբ տոկոսը,

բ) նվազեցնելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վճարված վարձավճարները, և

գ) վերաչափելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վերանայումները կամ վարձակալության վերափոխումները։

Յուրաքանչյուր ժամանակաշրջանում վարձակալության գծով պարտավորության նկատմամբ հաշվարկված տոկոսը ճանաչվում է շահույթում կամ վնասում։ Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ չներառված վարձակալության փոփոխուն վճարումները ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի է ունենում այդ վճարումներին հանգեցնող դեպքը կամ պայմանը։

Հիմնադրամի վարձակալությամբ ստացված ակտիվները դասակարգվել են որպես ցածր արժեք և ծախսագրվել են 2020 թվականի ընթացքում։

3.2 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման։ Մաշվող ակտիվները վերանայվում են արժեզրկման համար, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել։ Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը։

Փոխհատուցվող գումարն ակտիվի կամ դրամաստեղծ միավորի իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները և օգտագործման արժեքից առավելագույնն է։ Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը։ Չվերագնահատված ակտիվի գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում։ Այնուամենայնիվ, վերագնահատված ակտիվի գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է այլ համապարփակ շահույթում կամ վնասում այնքանով, որքանով արժեզրկումից կորուստը չի գերազանցում այդ նույն ակտիվի վերագնահատումից արժեքի աճը։ Վերագնահատված ակտիվի գծով այդպիսի արժեզրկումից կորուստը նվազեցնում է այդ ակտիվի վերագնահատումից առաջացած արժեքը։

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքն ավելացվում է մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին։ Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչվում է այլ

համապարփակ ֆինանսական արդյունքներում և ավելացնում է այդ ակտիվի վերագնահատումից արժեքի աճը: Այնուամենայնիվ, այնքանով, որքանով նույն վերագնահատված ակտիվի գծով արժեզրկումից կորուստը նախկինում ճանաչվել է շահույթում կամ վնասում, արժեզրկումից կորստի հակադարձումը ևս ճանաչվում է շահույթում կամ վնասում:

3.3 Ֆինանսական գործիքներ

Սկզբնական ճանաչում և ապաճանաչում

Հիմնադրամը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ այն դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնական ճանաչման պահին չափվում է իրական արժեքով՝ գումարած, այն դեպքում, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչման պահին անտոկոս կամ շուկայականից ցածր տոկոսով տրամադրած կամ ստացած փոխառությունները, երկարաժամկետ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերը չափվում են ոչ թե անվանական արժեքով, ոչ թե այդ պահին տրված կամ ստացված հատուցման չափով, այլ իրական արժեքով, որը որոշվում է դրանց գծով պայմանագրային ապագա դրամական հոսքերը զեղչելով՝ կիրառելով համապատասխան ժամկետայնության և ռիսկայնության գործիքների համար գերակշռող շուկայական տոկոսադրույքները: Սկզբնական չափման համար որոշված իրական արժեքի և տրված կամ ստացված հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ, երբ դա պետական շնորհի մաս է կազմում, որի դեպքում կիրառվում են «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ՀՀՄՍ 20-ով սահմանված մոտեցումները:

Ապաճանաչումը

Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն և միայն այն դեպքում, երբ՝

ա) ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (լրանում է ուժի մեջ լինելու ժամկետը). կամ

բ) այն փոխանցում է ֆինանսական ակտիվը, և փոխանցումը ստորև շարադրվածին համապատասխան որակվում է որպես ապաճանաչման պայմանները բավարարող:

Ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում, կամ ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է:

Գոյություն ունեցող փոխառուի և փոխատուի միջև նշանակալիորեն տարբերվող պայմաններով պարտքային գործիքների փոխանակումը պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նմանապես, գոյություն ունեցող ֆինանսական պարտավորության կամ դրա մի մասի պայմանների նշանակալի վերափոխումը (անկախ այն բանից, արդյոք այն վերագրելի է փոխառուի ֆինանսական դժվարություններին) պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում:

Մարված կամ այլ կողմի փոխանցված ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական պարտավորության մի մասի) հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ փոխանցված ցանկացած ոչ

դրամական ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հետագա չափումը

Սկզբնական ճանաչումից հետո տրամադրած և ստացած փոխառությունները, ավանդները, դեբիտորական և կրեդիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունքային տոկոսադրույքի մեթոդը: Կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքերը սովորաբար չափվում են անվանական գումարով: Ցպահանջ պարտավորությունները չափվում են այն գումարով, որով ենթակա են մարման պահանջը ներկայացվելու դեպքում:

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի փոփոխություններից օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնադրամ այլ կազմակերպությունների բաժնային գործիքներում (բաժնետոմսերում) ներդրումներ չունի:

Նախորդ ժամանակաշրջաններում Հիմնադրամն ունեցել է որպես «վաճառքի համար մատչելի» (ՎՀՄ) դասակարգված ֆինանսական ակտիվները, որոնք սկզբնական ճանաչումից հետո չափվել են իրական արժեքով: ՎՀՄ ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից օգուտը կամ կորուստը ճանաչվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ այդ փոփոխության մեջ փոխարժեքային տարբերություններին վերագրվող մասին և արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսի, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում: ՎՀՄ ֆինանսական ակտիվի ապաճանաչման կամ արժեզրկման ժամանակ նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված և սեփական կապիտալում կուտակված օգուտները կամ կորուստները՝ որպես վերադասակարգման ճշգրտում, հանվել են սեփական կապիտալից և ճանաչվել շահույթում կամ վնասում:

Արժեզրկում

Բոլոր ֆինանսական ակտիվների (բացի «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» դասակարգվածներից) և պայմանագրերի գծով ակտիվների համար Հիմնադրամը ճանաչում է ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) պահուստ՝ այդ ակտիվների սկզբնական ճանաչման պահին, ինչպես նաև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Սկզբնական ճանաչման ժամանակ ԱՊԿ պահուստը չափվում է 12-ամսյա ժամանակաշրջանում ակնկալվող պարտքային կորուստների մեծությամբ: Եթե սկզբնական ճանաչումից հետո որևէ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ, ապա այդ ֆինանսական ակտիվի գծով ԱՊԿ պահուստը չափվում է մինչև մարումը մնացած ամբողջ ժամանակաշրջանում ակնկալվող պարտքային կորուստների մեծությամբ: ԱՊԿ-ն պարտքային կորուստների՝ հավանականություններով կշռված գնահատականն է: Պարտքային կորուստները չափվում են որպես բոլոր դրամական պակասուրդների (այսինքն՝ գործիքի պայմաններին համապատասխան Հիմնադրամին հասանելիք դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի միջև տարբերությունը, որոնք Հիմնադրամն ակնկալում է ստանալ) ներկա արժեք՝ զեղչված ֆինանսական ակտիվի արդյունքային տոկոսադրույքով: ԱՊԿ պահուստը և դրա հետագա փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում: ԱՊԿ պահուստը ֆինանսական վիճակի հաշվեկշռային արժեքի նվազեցում :

3.4 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամական միջոցները, բանկերում բացված հաշվարկային հաշիվները, սկզբնապես մինչև երեք ամիս մարման ժամկետով կարճաժամկետ բանկային ավանդները:

3.5 Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժութային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում :

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում:

Արտարժույթ	*31.12.2020թ*	*31.12.2019թ*
1 Եվրո	641.11 դրամ	537.26 դրամ
1 Ռուսական ռուբլի	7.02 դրամ	7.77 դրամ
1 ԱՄՆ դոլար	522.59 դրամ	479.70 դրամ

3.6 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած մշակումն ավարտելու գնահատված ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ գնահատված ծախսումները: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը որոշվում է՝ կիրառելով «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» (ՖԻՖՈ) բանաձևը:

3.7 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Հիմնադրամն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունն էական է, ապա պահուստի գումարն իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Զեղչման դրույքն այն դրույքն է՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական

գնահատումները։ Զեղչման դրույքը չի արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն ճշգրտվել են։

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները վերանայվում են և ճշգրտվում են՝ ընթացիկ լավագույն գնահատականն արտացոլելու համար։ Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը հակադարձվում է։ Պահուստն օգտագործվում է միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր։

3.8 Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների հատուցումները ներառում են՝

- աշխատավարձը,
- կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները, ինչպիսիք են վճարովի տարեկան արձակուրդը և ժամանակավոր անաշխատունակության նպաստը,
- պարգևավճարները։

Աշխատակիցների հատուցումների այն գումարը, որն ակնկալվում է վճարել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում աշխատակիցներից ստացված ծառայության դիմաց, ճանաչվում է՝ ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո, և բ) որպես ծախս, բացառությամբ, երբ որևէ ստանդարտով պահանջվում կամ թույլատրվում է այդ հատուցումների ներառումը որևէ ակտիվի ինքնարժեքի (սկզբնական արժեքի) մեջ։ Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների գումարը, ապա Հիմնադրամն այդ գերազանցումը ճանաչում է որպես ակտիվ (կանխավճարված ծախս) այնքանով, որքանով այդ կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների նվազման կամ դրամական միջոցների վերադարձի։

Հիմնադրամն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները՝ կուտակվող փոխհատուցելի բացակայությունների ձևով (ինչպիսին է վճարովի ամենամյա արձակուրդը) ճանաչում է, երբ աշխատակիցները մատուցում են ծառայություն, որն ավելացնում է ապագա փոխհատուցելի բացակայությունների նրանց իրավունքը։ Կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափվում են այն լրացուցիչ գումարով, որը Հիմնադրամն ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք։

Հիմնադրամը պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչում է, երբ՝ ա) այն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք և բ) պարտականությունը կարող է արժանահավատորեն գնահատվել։ Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը պարտականության կատարումից խուսափելու որևէ իրատեսական հնարավորություն չունի։

3.9 Գնորդների հետ պայմանագրերից և այլ հասույթ

Հասույթը ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամի սովորական գործունեությունից առաջացող եկամուտն է, այսինքն տնտեսական օգուտների ավելացումն է (ակտիվների ներհոսքի կամ աճի կամ պարտավորությունների նվազման տեսքով), որը հանգեցնում է սեփական կապիտալի աճի, բացառությամբ սեփական կապիտալում հիմնադիրների կողմից ներդրումների հետևանքով սեփական կապիտալի աճի։ Հասույթ չի համարվում է պետական շնորհներից և նվիրատվություններից ստացված եկամուտը։

Հիմնադրամը ֆինանսական ներդրումներից տոկոսային հասույթը ճանաչում է արդյունքային տոկոսադրույքի մեթոդով՝ ՖՀՄՍ 9-ին համապատասխան։

Գնորդների հետ պայմանագրերից հասույթը Հիմնադրամը ճանաչում է, երբ բավարարվում են կատարողական պարտականությունները: Կատարողական պարտականությունները գնորդի հետ պայմանագրում նախատեսված խոստում են՝ փոխանցելու որոշակի ապրանքներ կամ ծառայություններ գնորդին: Կախված կատարողական պարտականության բնույթից՝ այն կարող է բավարարվել կամ ժամանակ ինչ որ մի պահի, կամ էլ ժամանակի ընթացքում:

Հիմնադրամի սովորական գործունեության հասույթ բերող ուղղությունները, դրանց գծով կատարողական պարտականությունները և հասույթների ճանաչման պահերը նկարագրված են ստորև.

Հասույթ բերող գործունեության ուղղությունը	Կատարողական պարտականությունը (ԿՊ)	ԿՊ-ի բավարարման ուղղությամբ առաջընթացի չափման մեթոդը	Հասույթի ճանաչման պահը
Հետազոտությունների և մշակումների իրականացում գնորդների պատվերով	Պայմանավորված հետազոտության և մշակման արդյունքների տրամադրում գնորդին	Բավարարվում է ժամանակի մի պահի	Երբ ԿՊ-ն կատարված է
Դասընթացների կազմակերպում և իրականացում	Ուսումնական ծրագրերին համապատասխան՝ սահմանված ժամանակացույցով դասընթացների անցկացումը համապատասխան որակավորում ունեցող դասընթացավարների կողմից, ներառյալ ուսումնական նյութերի տրամադրումը, քննությունների անցկացումը, սերտիֆիկացումը	Դասընթացի նախատեսված տևողության ընթացքում ժամանակային համամասնությամբ	1. Սովորաբար՝ ժամանակի ընթացքում գծային հիմունքով, 2. Առանձին դեպքերում՝ այն ժամանակ, երբ Հիմնադրամն այլևս չունի պարտավորություն վերադարձնելու ստացված հատուցումը և չունի կատարման ենթակա ԿՊ:
Գինու լաբորատոր փորձաքննությունների անցկացում	Պայմանավորված փորձաքննության արդյունքների տրամադրում գնորդին	Բավարարվում է ժամանակի մի պահի	Երբ ԿՊ-ն կատարված է

Այնքանով, որքանով Հիմնադրամի կողմից կատարողականին համապատասխան ճանաչված հասույթը գերազանցում է գնորդի կողմից վճարված հատուցումը, Հիմնադրամը ճանաչում է «պայմանագրի ծով ակտիվ», իսկ եթե գնորդից ստացված հատուցման գումարն է գերազանցում կատարողականին համապատասխան ճանաչված հասույթը, ապա տարբերությունը ճանաչվում է որպես «պայմանագրի գծով պարտավորություն»: Գնորդից անվերապահ ստացման ենթակա հատուցումը առանձնացվում է պայմանագրի գծով ակտիվից և ներկայացվում է որպես դեբիտորական պարտք:

3.10 Շնորհներ և նվիրատվություններ

Պետական շնորհները Հիմնադրամին ռեսուրսների փոխանցման տեսքով պետության (պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու միջազգային կազմակերպությունների) կողմից տրամադրվող օգնություն են՝ Հիմնադրամի գործառնական գործունեությանը վերաբերող որոշակի պայմաններին անցյալում կամ ապագայում համապատասխանության դիմաց: Այլ՝ մասնավոր, ոչ պետական հաստատություններից, բարեգործական կազմակերպություններից ստացված շնորհները համանմանության սկզբունքով հաշվառվում են ինչպես պետական շնորհները: Սակայն, եթե ստացված միջոցներին (ռեսուրսներին) կից՝ Հիմնադրամի գործառնական գործունեությանը վերաբերող որոշակի, կոնկրետ պայմաններ առկա չեն (օրինակ՝ տրամադրվել են Հիմնադրամի ընդհանուր գործառնական, կանոնադրական նպատակներով օգտագործվելու համար), ապա միջոցների այդպիսի ստացումը չի դիտվում որպես շնորհ, այլ դիտվում է որպես նվիրաբերություն կամ նվիրատվություն՝ կախված այլ համապատասխան հանգամանքներից:

Շնորհները չեն ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրանց կից բոլոր պայմանները, և որ շնորհները ստացվելու են:

Ակտիվներին վերաբերող շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհները նրանք են, որոնց հիմնական պայմանն այն է, որ Հիմնադրամը գնի, կառուցի կամ այլ կերպ ձեռք բերի ոչ ընթացիկ ակտիվներ: Դրանք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ ոչ ընթացիկ պարտավորությունների կազմում և սիստեմատիկ հիմունքով ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Ոչ դրամային ակտիվի ձևով ստացված շնորհները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են անվանական արժեքով, իսկ նման արժեքի բացակայության դեպքում՝ գնահատված իրական արժեքով և սիստեմատիկ հիմունքով ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում կամ այդ ակտիվի սպառումից առաջացող օգուտներին զուգընթաց:

Եկամուտներին վերաբերող շնորհներ

Շնորհները, որոնք չեն դասակարգվում որպես ակտիվներին վերաբերող, համարվում են եկամուտներին վերաբերող: Դրանք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են որպես հետաձգված եկամուտ ընթացիկ պարտավորությունների կազմում և ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես այլ եկամուտ՝ սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Հիմնադրամը որպես ծախս է ճանաչում դրանց գծով համապատասխան ծախսումները:

Նվիրատվություններ և նվիրաբերությունները

Նվիրատվությունները և նվիրաբերությունները առանց կոնկրետ պայմանների տրված նվիրաբերությունները որպես եկամուտ են ճանաչվում դրանց ստացման պահին:

3.11 Շահութահարկ

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար շահութահարկի գծով ընթացիկ հարկերը, դրանց չվճարված մասի չափով, ճանաչվում են որպես պարտավորություն: Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար արդեն վճարված գումարը գերազանցում է այդ ժամանակաշրջանների համար վճարման ենթակա գումարը, ապա գերազանցող մասը ճանաչվում է որպես ակտիվ:

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Հետաձգված հարկային պարտավորությունը ճանաչվում է բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, բացառությամբ այն հետաձգված հարկային պարտավորությունների, որոնք առաջանում են գուդվիլի սկզբնական ճանաչումից և ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից՝ այնպիսի գործարքի ներքո, որը ձեռնարկատիրական գործունեության միավորում չէ և այդ գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգ-տագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը, բացառությամբ այն հետաձգված հարկային ակտիվների, որոնք առաջանում են ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքի ներքո, որը ձեռնարկատիրական գործունեության միավորում չէ և այդ գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Առաջիկա ժամանակաշրջաններ փոխանցված չօգտագործված հարկային վնասների և չօգտագործված հարկային զեղչերի համար ճանաչվում է հետաձգված հարկային ակտիվ այն չափով, որ չափով հավանական է, որ Հիմնադրամն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել այդ չօգտագործված հարկային վնասները և չօգտագործված հարկային զեղչերը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Հիմնադրամը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում պետք է վերականգնվի այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Հիմնադրամն ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք,

բ) մտադիր է՝ կա՛մ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) զուտ հիմունքով, կա՛մ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Հիմնադրամի եկամուտների գերակշիռ մասն անհատույց ստացված ակտիվներ են, որոնք շահութահարկով հարկվող չեն, իսկ դրանց հաշվին կամ գծով կատարված ծախսերը նվազեցման ենթակա չեն: Այդ և այլ նկատառումներով ընթացիկ և նախորդ տարիներին Հիմնադրամի կողմից հետաձգված հարկեր չեն ճանաչվել:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Հող	Շենք-շինություն	Մեքենաներ և սարքավորումներ	Արտադրական գույք, տնտեսական գույք	Տրանսպորտային միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք		-	-	-	-	-	-
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**-**	**-**	**107,756**	**53,568**	**27,574**	**21,525**	**210,423**
Ավելացում	3,871	86,607	15,348	3,570	-	181	**109,577**
Դուրսգրում	-	-	(5,078)	(10,185)	(8,951)	-	**(24,214)**
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,871**	**86,607**	**118,026**	**46,953**	**18,623**	**21,706**	**295,786**
Ավելացում	9,160	-	9,927	1,889	8,072	684	**29,732**
Դուրսգրում	-	-	(19,809)	(864)	-	-	**(20,673)**
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**13,031**	**86,607**	**108,144**	**47,978**	**26,695**	**22,390**	**304,845**
Կուտակված մաշվածություն							
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**-**	**-**	**64,119**	**38,784**	**27,339**	**13,056**	**143,298**
Տարվա ծախս	-	58	11,962	2,734	64	2,045	**16,863**
Դուրսգրում	-	-	(5,078)	(10,185)	(8,951)	-	**(24,214)**
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**-**	**58**	**71,003**	**31,333**	**18,452**	**15,101**	**135,947**
Տարվա ծախս	-	4,330	18,301	3,212	364	2,067	**28,274**
Դուրսգրում	-	-	(19,809)	(864)	-	-	**(20,673)**
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**-**	**4,388**	**69,495**	**33,681**	**18,816**	**17,168**	**143,548**
Հաշվեկշռային արժեք							
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,871**	**86,549**	**47,023**	**15,620**	**171**	**6,605**	**159,839**
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**13,031**	**82,219**	**38,649**	**14,297**	**7,879**	**5,222**	**161,297**

Հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամի հիմնական միջոցների նկատմամբ սահմանափակումներ առկա չեն:
2020թ. ընթացքում Հիմնադրամը չի հայտնաբերել իր հիմնական միջոցների արժեզրկում:
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,296 անուն 81,978 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,306 անուն 91,483 հազար դրամ) համախառն հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցներ հաշվառված են զրոյական հաշվեկշռային արժեքով:

5 Այլ ոչ ընթացիկ ակտիվներ

31.12.2020թ դրությամբ այս հոդվածում ներկայացված են Հիմնադրամի կողմից օգտագործման իրավունքով ստացված տարածքների վրա կատարված կապիտալ ծախսումները, որոնք ամորտիզացվում են 5 տարի ժամկետով, ինչպես նաև ոչ նյութական ակտիվներ՝ 133 հազ. ՀՀ դրամ արժեքով (31.12.2019թ. 113 հազ. ՀՀ դրամ):

6 Պաշարներ

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Գինիներ	4,680	-
Վառելիք	976	112
Շինարարական նյութեր և պահեստամասեր	2,490	325
Անավարտ արտադրանք	-	1,886
Այլ նյութեր	376	371
Ընդամենը	**8,522**	**2,694**

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը չունի գրավադրված պաշարներ: Պաշարների սեփականության իրավունքի այլ սահմանափակումներ չկան:

2020թ. ընթացքում որպես ծախս ճանաչված պաշարների արժեքը կազմում է 8,142 հազար դրամ (2019թ.՝ 27,793 հազար դրամ): Պաշարները ներկայացվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Հաշվետու տարվա ընթացքում պաշարների արժեքի նվազում տեղի չի ունեցել:

7 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մատուցված ծառայությունների գծով դեբիտորական պարտքեր և ավարտվածության աստիճանով որոշված ակտիվներ	2,540	1,328
Հետաձգված ծախսեր տրված ենթադրամաշնորհների գծով	226	226
Տրված կանխավճարներ	84,809	7,361
Դեբիտորական պարտքեր ստացվելիք շնորհների գծով	6,691	22,833
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	4,375	1,981
Ընդամենը	**98,641**	**33,729**

8 Դրամական միջոցներ և ոչ դրամային գործարքներ

8.1 Դրամական միջոցներ

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամարկղ՝ ՀՀ դրամով	748	1,352
Բանկային հաշիվներ՝ ՀՀ դրամով	27,228	36,354
Բանկային հաշիվներ՝ արտարժույթով	262,259	289,981
Ընդամենը	**290,235**	**327,687**

Նշված ամսաթվերի դրությամբ դրամական միջոցների օգտագործման որևէ սահմանափակում չկա:

8.2 Ոչ դրամային գործարքներ

Հազար դրամ	2020թ.	2019թ.
Հիմնական միջոցների որպես շնորհ ստացում	3,414	553
Ընդամենը	**3,414**	**553**

9 Շնորհներ

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներին վերաբերող շնորհներ		
Տարեսկզբի մնացորդ	**44,226**	**45,111**
Տարվա ընթացքում ստացված	3,415	8,557
Ֆինանսական արդյունքներում արտացոլված	(9,192)	(9,442)
Տարեվերջի մնացորդ	**38,449**	**44,226**
Եկամուտներին վերաբերող շնորհներ		
Տարեսկզբի մնացորդ	**225,742**	**35,222**
Տարվա ընթացքում ստացված	255,695	437,833
Շնորհի ետ վերադարձ	-	(111)
Ստացման ենթակա շնորհներից մուտքեր	25,943	18,301
Նախորդ տարվա ստացման ենթակա շնորհի մարում	(22,833)	(15,185)
Ստացման ենթակա շնորհներ	6,691	22,833
Փոխանցում ակտիվներին վերաբերող շնորհներ	-	(8,697)
Ֆինանսական արդյունքներում արտացոլված	(233,902)	(264,454)
Տարեվերջի մնացորդ	**257,336**	**225,742**
Ընդամենը	**295,785**	**269,968**

10 Առևտրային կրեդիտորական և այլ պարտավորություններ

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	356	3,240
Պայմանագրերի գծով պարտավորություն (ստացված կանխավճարներ)	9,432	2,228
Պարտավորություններ պետական բյուջեին	427	7,845
Չօգտագործված արձակուրդայինի գծով պահուստ	6,767	2,397
Ընդամենը	**16,982**	**15,710**

11 Հասույթ

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Սիրիահայերի և տեղաբնակ հայերի համար գինեգործության դասընթացի կազմակերպում (WINMASTER)	5,830	4,329
Փոքր ու միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության ծրագիր	4,542	-
Աշխարհատեղեկատվական համակարգերի և հեռահար զոնդավորման դասընթաց	-	4,011
Հայաստանի տնտեսական աճ հետազոտություն	25,285	-
Դասընթացների կազմակերպում իրավաբանական և ֆիզիկական անձանց համար	10,197	6,558
Գինու լաբորատոր փորձաքննությունների անցկացում իրավաբանական և ֆիզիկական անձանց համար	7,525	5,917
Լաբորատոր և խորհրդատվական ծառայություններ	2,407	3,970
Այլ	679	540
Ընդամենը	**56,465**	**25,325**

12 Նվիրաբերությունից եկամուտներ

Հաշվետու տարվա ընթացքում 20,666 հազար ՀՀ դրամի չափով (2019 թվականի ընթացքում 183,801 հազար ՀՀ դրամ) նվիրաբերությունից եկամուտներն իրենցից ներկայացնում են Հիմնադրամի կանոնադրական նպատակների իրականացման համար ՀՀ և օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձանցից ստացված միջոցները:

13 Գրասենյակային ծախսեր

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Նյութական և գրենական ծախսեր	1,630	8,336
Կայքերի պատրաստման, շահագործման ծախսեր	770	1,924
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	2,405	1,751
Վարձակալական վճարներ	4,804	2,230
Տրանսպորտային ծախսեր	1,093	1,600
Մրցույթների գծով ծախսեր	3,877	950
Տեսահոլովակի, տեսաֆիլմերի նկարահանում, մշակում	1,680	-
Այլ	2,659	3,395
Ընդամենը	**18,918**	**20,186**

14 Գործառնական և այլ ծախսեր

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դասընթացների և թրեյնինգների կազմակերպման ծախսեր	2,231	1,485
ՀԱԱՀ ինկուբատորի համար նախատեսված ծախսեր	13,528	1,080
Նվիրատվություն և աջակցություն ՀԱԱՀ-ին	19,909	222
Վերանորոգման և շինարարական ծախսեր	2,851	1,983
Տպագրական ծախսեր	2,731	601
Գյուղատնտեսական նյութեր, քիմիկատներ և այլ փորձաքննական պարագաներ	1,173	298
Մասնագիտական և խորհրդատվական ծախսեր	2,445	2,238
Այլ	2,511	529
Ընդամենը	**47,379**	**8,436**

15 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ	5,525	1,328
Ընդամենը	**5,525**	**1,328**

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ)	10,430		111,365	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2019թ.՝ 20%)	1,877	18%	22,273	20%
(Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	3,648	35%	(20,945)	-19%
Շահութահարկի գծով ծախս	5,525	53%	1,328	1%

16 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի: Հիմնադրամն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին:

17 Ֆինանսական գործիքներ

17.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.5-ում:

17.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9,231	24,161
Մնացորդներ բանկերում	289,487	326,335
Ընդամենը	**298,718**	**350,496**

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	356	3,240
Ընդամենը	**356**	**3,240**

18 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:
Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Հիմնադրամը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, որը բխում է գործառնական գործունեությունից:

- ✓ ***Արտարժութային ռիսկ***

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը: Հիմնադրամի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Հիմնադրամի՝ դրամական միջոցներից, առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտավորություններից, որոնք ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով և եվրոյով: Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, որոնք Հիմնադրամին ենթարկում են արտարժութային ռիսկի, ներկայացված են ստորև.

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Հազար ՀՀ դրամ	Եվրո	Հազար ՀՀ դրամ
Ֆինանսական ակտիվներ				
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	-	-	-
Մնացորդներ բանկերում	152,771	79,837	284,542	182,423
	152,771	**79,837**	**284,542**	**182,423**
Ֆինանսական պարտավորություններ				
Կրեդիտորական և այլ պարտավորություններ				
	-	-	-	-
Զուտ արդյունք	**152,771**	**79,837**	**284,542**	**182,423**

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Հազար ՀՀ դրամ	Եվրո	Հազար ՀՀ դրամ
Ֆինանսական ակտիվներ				
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	15,129	7,250	-	-
Մնացորդներ բանկերում	212,507	101,940	350,000	188,041
	227,636	**109,190**	**350,000**	**188,041**
Ֆինանսական պարտավորություններ				
Կրեդիտորական և այլ պարտավորություններ				
	-	-	-	-
Զուտ արդյունք	**227,636**	**109,190**	**350,000**	**188,041**

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ դրամի 10% (2019թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2019թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2019թ.՝ 10%):

Դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2019թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2020թ.	2019թ.	2020թ.	2019թ.
Շահույթ կամ վնաս	7,984	10,919	18,242	18,804

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Հիմնադրամի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Հիմնադրամի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է միջոցները տարբեր բանկերում պահելու միջոցով և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Հիմնադրամի քաղաքականությունն է համագործակցել միայն վճարունակ գործընկերների հետ:

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեքներ		
Դեբիտորական պարտքեր	9,231	24,161
Մնացորդներ բանկերում	289,487	326,335
Ընդամենը	**298,718**	**350,496**

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Հիմնադրամն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

19 Իրական արժեքի չափում

Հիմնադրամը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

20 Պայմանականություններ

20. 1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով, ինչպես նաև միջազգային տնտեսական ճգնաժամը: Հայաստանի Հանրապետության հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վատթարացումը հանգեցրել է արտերկրից դրամային փոխանցումների կրճատմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը գտնվում է մեծ կախման մեջ: Հանքահումքային ապրանքների միջազգային գների հետագա անկումը, անորոշությունները՝ պայմանավորված ուղղակի կապիտալ ներդրումների ներգրավման հնարավորություններով, գնաճը, կարող են հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Հիմնադրամի վիճակի վատթարացման: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա դատողություններն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Հիմնադրամի ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքի վրա: Հիմնադրամի ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Հիմնադրամի տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

20.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Հիմնադրամը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Հիմնադրամի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

20.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել: Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

20.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ՝ Հիմնադրամը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

21 Կապակցված կողմեր

Հիմնադրամը որևէ կազմակերպության կողմից չի վերահսկվում: Հիմնադրամի ղեկավարման բարձրագույն մարմինը հոգաբարձուների խորհուրդն է, որի կազմը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում:

Հիմնադրամն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ:

Կապակցված կողմերի հետ իրականացված գործարքների մանրամասները հետևյալն են.

ա) Հոգաբարձուների խորհրդի անդամների հետ կատարված գործարքների մանրամասներ.

Հազար ՀՀ դրամ	Մնացորդը առ 31.12.2020	2020թ.		Մնացորդը առ 31.12.2019
Փորձագիտական ծառայությունների ստացում	-	(5,882)	5,882	-
Գործուղում	-	-	-	-

Հազար ՀՀ դրամ	Մնացորդը առ 31.12.2019	2019թ.		Մնացորդը առ 31.12.2018
Փորձագիտական ծառայությունների ստացում	-	(5,980)	5,980	-
Գործուղում	-	(1,500)	1,500	-

բ) Ղեկավարության հետ կատարված գործարքների մանրամասներ.

Հազար ՀՀ դրամ	Մնացորդը առ 31.12.2020	2020թ.		Մնացորդը առ 31.12.2019
Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ	-	(12,644)	12,644	-
Փորձագիտական ծառայությունների ստացում	-	(3,115)	3,115	-
Ապրանքների ձեռքբերում	-	(37)	37	-
Գործուղում	-	(344)	344	-

Հազար ՀՀ դրամ	Մնացորդը առ 31.12.2019	2019թ.		Մնացորդը առ 31.12.2018
Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ	-	(7,873)	7,873	-
Փորձագիտական ծառայությունների ստացում	-	(8,114)	8,114	-
Ապրանքների ձեռքբերում	-	(40)	40	-
Գործուղում	-	(5,879)	5863	16

22 Համադրելի ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Նախորդ տարիներին առնչվող վերադասակարգման սխալների բացահայտման պատճառով Հիմնադրամը 2020թ. ընթացքում որոշել է վերաներկայացնել նախորդ տարվա դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը համաձայն ՀՀՄՍ 8 «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ» ստանդարտի։

Վերադասակարգման սխալները հիմնականում կապված են նախորդ հաշվետու ժամանակաշրջանի դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նվիրաբերություններից մուտքերը որպես շնորհների և ծառայությունների մատուցումից մուտքերի, ինչպես նաև ծառայությունների, աշխատանքների ձեռքբերման գծով ելքերը և աշխատակիցներին և նրանց անունից վճարումները որպես վճարումներ անձնակազմին և նրանց անունից՝ կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների դիմաց ոչ ճիշտ դասակարգման հետ, որոնց ուղղման ազդեցությունը ներկայացված է ստորև:
Ղեկավարությունը որոշել է համապատասխան ուղղումներ կատարել դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում, որոնք կիրառվել են հետընթաց՝ համաձայն Հիմնադրամի որդեգրած քաղաքականության։

Վերադասակարգումների ազդեցությունը դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության վրա ներկայացված է ստորև.

Հազար դրամ	Համաձայն նախորդ հաշվետվության	Վերադասակարգ-ման ազդեցությունը	Վերաներկա-յացված
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Ծառայությունների մատուցումից մուտքեր	139,925	(110,310)	29,615
Ստացված շնորհներ	512,788	(56,765)	456,023
Ստացված նվիրաբերություններ	16,726	167,075	183,801
Նյութերի , ապրանքների ձեռքբերման գծով ելքեր	(20,911)	20,911	-
Գործուղումների գծով ելքեր	(9,267)	9,267	-
Ուսանողների կեցության ապահովում և այլ օժանդակություն	(95)	95	-
Վճարումներ մատակարարներին	-	(95,635)	(95,635)
Ծառայությունների, աշխատանքների ձեռքբերման գծով ելքեր	(170,948)	170,948	-
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(143,870)	143,870	-
Վճարումներ անձնակազմին և նրանց անունից՝ կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների դիմաց	-	(239,950)	(239,950)
Ուսանողների օժանդակություն	-	(1,168)	(1,168)
Վճարված հարկեր և այլ պարտադիր վճարներ՝բացի շահութահարկից	(3,523)	(178)	(3,701)
Վճարված շահութահարկ	(1,000)	-	(1,000)
Այլ գործառնական ելքեր	139,925	(110,310)	29,615
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**316,353**	**10,612**	**326,965**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Հիմնական միջոցների և այլ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար վճարումներ	(113,872)	(10,612)	(124,484)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(113,872)**	**(10,612)**	**(124,484)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
-	-	-	-
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**-**	**-**	**-**
Դրամական միջոցների զուտ հոսք	**202,481**	**-**	**202,481**
Ժամանակաշրջանի սկզբի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	125,094	-	125,094
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	111	1	112
Ժամանակաշրջանի վերջի դրությամբ դրամական միջոցներ	**327,686**	**305,457**	**327,687**

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 02.09.2021 18:05